ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՎՈՐԳ ՍԼՈՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 45.6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ սույն գործով խնդիրը չի առնչվում միայն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի վիճարկվող հոդվածին, անհրաժեշտ է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի հիման վրա պարզել նաեւ «Կրթության մասին» եւ «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներում եւ մի շարք ենթաօրենսդրական ակտերում առկա որոշ անորոշությունների հետ կապված հանգամանքները, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Հետաձգել գործի դատաքննությունը եւ այն վերսկսել 2014 թվականի ապրիլի 18-ին, ժամը 10.00-ին:

2. Այդ կապակցությամբ ուժը կորցրած ճանաչել ՀՀ սահմանադրական դատարանի 15.11.2013թ. ՍԴԱՈ-88 աշխատակարգային որոշման 1-ին կետը:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կարգով սույն գործի դատաքննությանը հրավիրել ՀՀ կրթության եւ գիտության նախարար Ա. Աշոտյանին՝ սահմանադրական դատարանի անդամների որոշ հարցերի վերաբերյալ պարզաբանումներ տալու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

4 մարտի 2014 թվականի
ՍԴԱՈ -10